

Վ. Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԵՐԲ ԵՎ ԻՆՉՊԵՍ Է ՍԿՋԲՆԱՎՈՐՎԵԼ ՂՐԻՄԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

Տավրիկիայում (Ղրիմի թերակղզում) դարեր շարունակ հարատևած հայ զաղութը եղել է զաղթական հայության ամենախոշոր բեկորներից մեկը՝ նրա պատմությունը զաղութահայ պատմության բովանդակալից էջերից է և որպես այդպիսին՝ արժանի գիտական ամենալուրջ ուսումնասիրության։ Մինչդեռ իր ամբողջության մեջ այն տակավին մի չակոսված խոպան է։ Այդ բացը չեն լրացնում ոչ Ք. Վ. Քուլենբյանի աշխատությունը¹ և ոչ էլ այն կցկտուր տեղեկությունները, որոնք վերաբերում են ղրիմահայ կյանքին ու սփռված են հայ և այլազգի հեղինակների հոդվածներում ու մենագրություններում։

Ք. Քուլենբյանի գիրքը, լինելով Ղրիմի հայ զաղութի պատմությանը նվիրված առաջին ու մինչև օրս էլ միակ աշխատությունը, անշուշտ մի առաջընթաց բայլ էր այդ ուղղությամբ։ Սակայն այդ գիրքը չի կարող մեր ընթերցողին բավարարել ոչ միայն իր անընդունելի՝ դուրս ազգայնական-կրոնական (կաթոլիկական) մեթոդոլոգիայի պատճառով, այլև փաստական նյութի ընդգրկմամբ, զաղութի ամբողջական պատմության տեսակետից։ Այնտեղ հիմնականում տրված է ղրիմահայ եկեղեցիների նկարագրությունը և շատ քիչ բան՝ զաղութի քաղաքացիական պատմությունից։ Ինչպես և պետք էր սպասել, զրքում բոլորովին բացակայում է սոցիալ-տնտեսական կյանքի վերլուծությունը։

Դեռևս Ք. Քուլենբյանից տասնամյակներ առաջ ղրիմահայ զաղութին ծավալուն կերպով անդրադարձել էր Մ. Բժշկյանը իր «Ծանապարհորդության» մեջ²։ Նրա աշխատությունը մասնավորապես արժեքավոր է նրանով, որ լինելով Ղրիմում՝ Բժշկյանը հանգամանորեն նկարագրել է տակավին 19-րդ դարի առաջին քառորդում այնտեղ պահպանված հայկական հնությունները և առաջին անգամ հրապարակել հին ղրիմցիների հիշատակարանը՝ Անիից — Ախսարայ և այնտեղից էլ Ղրիմ զաղթելու մասին։ Բացի այս հիշատակարանում բովանդակվող նյութից՝ Բժշկյանի գիրքը ուրիշ տեղեկություն չի հաղորդում մինչև 19-րդ դարը Ղրիմի հայ զաղութի պատմությունից։

Հետագայում, հայ պարբերականներում Ղրիմի հայկական զաղութին նվիրված առանձին հոդվածները այս երկու աշխատություններում եղած նյութի նույնօրինակ լուսաբանումից զրեթե այն կողմ չեն անցնում։ Ղրիմահայ գաղութի անցյալի պատմության առումով, չհաշված 19-րդ դարի երկրորդ կեսին վերաբերող տեղեկությունները, նույնը պիտի ասել Հ. Տեր-Աբրահամյանի «Պատմություն խրիմու» (Թեոդոսիա, 1865) զրքի մասին։

Ինչպես վկայում է այս հոդվածի վերտառությունը, մենք այժմ հավակնություն չունենք տալու զաղութի ամբողջական պատմությունը կամ բնար-

¹ Ք. Վ. Քուլենբյան, Պատմություն գրականության խրիմու Հայոց, Վենետիկ, 1895։

² Մ. Զ. Բժշկյան, Ծանապարհորդություն ի Հաստան և յայլ կողմանս... Վենետիկ 1880։

կելու այդ պատմությունը առնչվող բազմազան հարցեր: Մեր նպատակը խիստ համեստ է. խնդիր ենք դրել տալ գաղութի կազմավորման պատմությունը՝ անշուշտ նրա հետ մերվող հարցերի լուսաբանման տեսադաշտի վրա: Թե որքանով կհաջողվի մեզ լուծել տվյալ առաջադրանքը, դա արդեն թողնում ենք մեր ընթերցողի անկաշառ դատին:

* * *

Ղրիմի թերակղզին, հայ գաղթականության մի ստվար հատվածի երբեմնի դարավոր այդ հանգրվանավայրը, հնագույն ժամանակներից ի վեր, փոփոխաբար եղել է բնակելատեղին զանազան ցեղերի ու ժողովուրդների, որոնք այստեղ հարատևել և իրենց մշակույթն են կերտել՝ ժամանակակիցներիս թողնելով հրեման նշմարելի, իսկ հաճախ էլ աղոտ տեղեկություններ միայն իրենց անցած-գնացած օրերից: Եվ այնուամենայնիվ՝ պատմական հնագույն և հավաստի պատառիկներից արդեն վաղուց պարզ է դարձել հաջորդական շարանն այն ժողովուրդների, որոնք տարբեր դարաշրջաններում ապրել ու գործել են Տավրիկյան երկրում: Հույն պատմիչների թողած տեղեկությունների համաձայն Ղրիմի ամենահին բնակիչներն էին նախ՝ կիմերացիները և ապա՝ տավրերն ու սկյութացիները:

Մեր թվարկությունից առաջ 6—5-րդ դարերում Ղրիմ առաջին անգամ մուտք են գործում և տավրո-սկյութներին հարկատու լինելու պայմանով իրենց բնակավայրերն ու առևտրական ֆակտորիաներն են հիմնում հին հույները, որոնք ժամանակի ընթացքում այնքան էն ուժեղանում, որ տեղացիներին սպառնում են զենքով: Հույներն այստեղ հիմնում են Թեոդոսիա, Պոնտիկապոլիս, Ֆանագորիա և Խերսոնես քաղաքները, իսկ մի փոքր ուշ՝ Բոսպորի և Խերսոնեսի անտիկ պետությունները:

Մեր թվարկության մոտերքը Ղրիմ են թափանցում ալանները, ապա սրանց հետևում են գոթերը, ավելի ուշ՝ հոնները, պեչենեղները, խազարները, իսկ 11-րդ դարում՝ պոլովցիները (կոմանները կամ ուցները), 13-րդ դարի 30-ական թվականներին՝ թաթար-մոնղոլները:

5—11-րդ դարերում Ղրիմի ծովափի մի շարք կետեր գտնվում էին Բյուզանդիայի տիրապետության տակ կամ էլ՝ վասալական կախման մեջ նրանից:

Արդ, բնականաբար, ծագում է այն հարցը, թե տարբեր ժողովուրդների խառնարանը հանդիսացած Սև ծովի այս գեղատեսիլ անկյունը առաջին անգամ ե՞րբ է հյուրընկալել սլանդուխտ հայ զանգվածներին: Այլ խոսքով ասած՝ ե՞րբ է սկզբնավորվել ու ձևավորվել հայկական գաղութը Ղրիմում:

Այս հարցը ինչպես հայ, այնպես էլ ռուս և ևլրոպական պատմական գրականության մեջ չի եղել հատուկ քննության առարկա, թեև նրան հարևանցիորեն անդրադարձել են ոչ չիչ թվով գիտնականներ՝ տարբեր նախասիրություններով: Այդ գիտնականների կարծիքները, ի մի բերելով, նրանց պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի:

³ Տե՛ս Հ. Տեր-Արթուրյան, Պատմություն իրիմու, Թեոդոսիա, 1865, մասն 1, էջ 4 և 8:

⁴ Տե՛ս И. Данилевский, Очерк истории Инкермана, Одесса, 1855, էջ 8:

⁵ Տե՛ս П. Н. Надинский, Очерки по истории Крыма, Симферополь, 1951, часть 1, էջ 30:

Առաջին խումբ.—Դրանք այն հեղինակներն են, որոնք հիմք ընդունելով պատմական թեև ոչ բազմաքանակ, բայց բավարար թվով անհերքելի տեղեկություններ, փաստորեն այն միտքն են հայտնում, թե արդեն 11-րդ դարում այլևայլ ժողովուրդների կողքին Ղրիմում մշտական բնակություն էին հաստատել նաև հայերը: Այս կարծիքին են Ղրիմի պատմության տարբեր հարցերի գծով այնպիսի ճանաչված հեղինակություններ, ինչպիսիք են՝ Վ. Կոնդորակին, Վ. Յուրգևիչը, Ֆ. Բրունը, Վիլհելմ Հեյդը, Ա. Յակոբսոնը, ինչպես նաև՝ Կ. Նզյանը, Ս. Պալասանյանը, Ք. Քուշներյանը, Կ. Շահնաղարյանը⁶ և ուրիշներ:

Ներկուր խումբ.—Այս խմբի հեղինակները նույնպես հատուկ ուսումնասիրություն չեն դարձրել այդ հարցը: Առաջինների նման սրանք ևս բավարարվում են միայն հիշատակումներ կատարելով, ընդ որում նրանց բոլորի համար կամա թե ակամա աղբյուր է ծառայել գրիմաճայերի այն պատմություն-հիշատակարանը (տե՛ս ՀՍՍՌ Մատենադարան, ձեռագիր № 7447, թթ. 280—283), որը 1830 թ. առաջին անգամ հրատարակել է Մ. Բժշկյանը⁷: Այս հիշատակարանը պատմում է, որ 13-րդ դարում Անիի հայերը, Զարմաղանի ասպատակություններից հալածված գաղթելով են Ախսարայ (Կաղանի և Աստրախանի մեջտեղը), իսկ այնտեղից էլ՝ 1330 թ. Ղրիմ: Այս թվականից առաջ Ղրիմում հայերի բնակվելու մասին այդ հեղինակները գրեթե փաստեր չեն բերում և նրանց մոտ այդ թվականը ակամայից դառնում է գաղութի կազմավորման սկիզբը: Հայ պատմական գրականության մեջ այդ հեղինակներից են Մ. Հ. Բժշկյանն ու Հ. Տեր-Արրաճամյանը, իսկ ուսանողների մոտ՝ Սեստրենցե-վիչ-Բոգուշն ու Պյոտր Կեպենը⁸:

Զժխտելով 13-րդ դարում Հայաստանից Ախսարայ, իսկ այնտեղից էլ Ղրիմ հայերի կատարած զանգվածային տեղաշարժը, մենք, սակայն, համակարծիք ենք առաջին խմբի գիտնականներին, որոնք հակված են 11—13-րդ դարերում Տավրիկյան թերակղզու վրա հայկական մշտական բնակավայրեր տեսնելու կարծիքին:

Այսպես, եթե ընդունելու լինենք, որ 11—13-րդ դարերում Ղրիմում գոյու-

⁶ См. В. Х. Кондоракки, Универсальное описание Крыма, том 1—4, СПб, 1875, том 3, часть 9, էջ 24, т. 4, часть 14, էջ 102; А. Маркевич, К вопросу о положении христианства в Крыму во время татарского владычества (извлечение из Таврического церковного-общественного вестника, за 1910 г.), էջ 8; Ю. Юргевич, Примечания к „Уставу для генуэзских колоний в Черном море, изданному в Генуэ в 1449 г.“ (տե՛ս „Записки Одесского общества истории и древностей“, том V, էջ 827—829; այսուհետև տե՛ս Յ. Օ. Օ. Ի. Դ.); Ф. Брун, Черноморье, часть II, Одесса, 1880, էջ 138; W. Heyd, Geschichte des Levantehandels im Mittelalter, Stuttgart, 1879, էջ 174; А. Якобсон, Средневековый Херсонес (XII—XIV вв.), М.—Л., 1950, էջ 36; Կ. Նզյան, Բռնի միութիւն հայոց ընդ եկեղեցւոյն հոռմայ, Ս. Պետերբուրգ, 1884, էջ ԺԵ: Ս. Պալասանյան, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1890, էջ 641, Ք. Վ. Քուշներյան, Պատմություն դաղթականության Պրիմու հայոց, Վենետիկ, 1893, էջ 92—93, Կ. Շահնաղարյան, Երազիր պատմության Հայաստան աշխարհին և տեսությունն ինչ հայաստանի... (տե՛ս «Կոռնկ հայոց աշխարհին», 1863, օգոստոս):

⁷ См. М. З. Божьян, Изданный ашхататությունը, էջ 335—342:

⁸ См. М. З. Божьян, Изданный ашхататությունը, էջ 335—342; Հ. Տեր-Արրաճամյան, Изданный գիրքը, էջ 97; Сестренцевич Богуш, История о Таврии, часть II, 1806, էջ 176—177; П. Кеппен, О древностях южного берега Крыма и гор Таврических (Крымский сборник), СПб, 1837, էջ 28:

թյուն ուներ հայ զաղութ, ապա ինքնին հարց է առաջանում, թե ի՞նչ պատճառներից զրգված և ինչպիսի՞ ուղիներով հայերը զաղթեցին Ղրիմ և ի՞նչպիսի փաստերով է հիմնավորվում նշված ժամանակաշրջանում զրիմահայ զաղութի գոյությունը: Այս հարցերի պատասխանը ունի պատմական հեռավոր արմատներ և միահյուսվում է 7—11-րդ դարերում Հայաստանում տեղի ունեցած թոհուրոհի հետ՝ իստ համառոտակի տանք զրա պատկերը:

Բյուզանդիայի և Բաղդադի խալիֆաթի միջև մոտ 300 տարի (7—10-րդ դարեր) Փոքր Ասիայի, Հայաստանի և Սիրիայի համար մղված պատերազմները⁹ և ապա 11-րդ դարում սելջուկների արշավանքները սահմոկեցուցի: աղետների հետ մեկտեղ հայ ժողովրդին բերեցին նաև մի ահավոր արհավիրք՝ կամավոր և բռնի արտագաղթը: Արարական տիրապետությունը Հայաստանում բնակչությանը բերեց մեծ զրկանքներ, մարդկային անհամար զոհեր, տնտեսական կյանքի փլուզում: Անդամ մեռելների համար հարկ պահանջող¹⁰ բռնակալից ազատվելու համար հայր ստիպված էր բռնել պանդխտության ուղին: Վրաստան և Աղվանաց աշխարհ զաղթելը անմիտ կլինեք, որովհետև այնտեղ ևս իշխում էր նույն տիրակալը: Ամենահամար ուղին տանում էր քրիստոնյա Բյուզանդիայի փոքրասիական շրջանները, ուր և զաղթում էին հայերը: Արդեն 7-րդ դարում և նույնիսկ 6-րդ դարի կեսերից Կ. Պոլսում և Բյուզանդիայի մի շարք զավատներում հայկական զաղութներ կային: Սակայն այս շրջանի զաղութների հայ բնակչությունը արագորեն ձուլվում է¹¹: Հայ նախարարների մի մասը Բյուզանդիա է զաղթում՝ 706 թ. Երշապետ զյուղի մոտ բյուզանդական զորքերի հետ միասին արարներից կրած պարտությունից հետո¹²: Մեծ թվով հայ ազգաբնակչություն բյուզանդական նահանգներն է տեղափոխվում 8-րդ դարի 50—60-ական թվականներին կայսր Կոստանդին Կոպրոնիմոսի ժամանակ, որն ասպատակել էր հայկական մի շարք շրջաններ¹³:

Հայերի նոր արտագաղթ զեպի Բյուզանդիա տեղի է ունենում 774—775 թթ. արարների զեմ ուղղված ապստամբության պարտությունից հետո¹⁴ և ապա զրանից մոտ 16 տարի անց, երբ 12 հազար հայեր Շապուհ Ամատունու զխալորության տեղափոխվում են Բյուզանդիա¹⁵: Այդ նույն ժամանակներում, 778 թ. Մարաշի Երմանիկե վայրից մեծ թվով հայ պալիկյաններ զաղթեցվում են Թրակիա¹⁶:

Արարական խալիֆաթի թուլացմանը զուգընթաց Արևելքում ուժեղանում են Բյուզանդիայի զիրքերը: Կայսր Վասիլ 1-ից (867—886 թթ.) սկսած՝ բյուզանդացիները Փոքր Ասիայում արարներից մեկ առ մեկ նվաճում են շատ

⁹ Г. Г. Микаелян, История киликийского армянского государства, 1952, Ереван, էջ 48:

¹⁰ Տե՛ս «Ղեռնգեայ վարդապետի պատմություն», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 127 (այսուհետև տե՛ս Ղեռնգ):

¹¹ Տե՛ս Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ զաղթականության, հատ. 1-ին, Կահիրե, 1941, էջ 182:

¹² Տե՛ս Ղեռնգ, էջ 33:

¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 129:

¹⁴ Տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. II (Թ յասի նյութեր), 1960, էջ 223:

¹⁵ Տե՛ս Ղեռնգ, էջ 169:

¹⁶ Տե՛ս Ա. Ալպոյաճյան, նշված աշխատությունը, էջ 232:

շրջանները Նիկիփորոս II (963—969 թթ.) կայսրի օրոք և նրանից հետո բնդհուպ մինչև սելջուկների արշավանքները Բյուզանդիայի այդ հաջողությունները Արևելքում կրում էին նաև հակահայկական ընթացք: Ինչպես սա, այնպես էլ Հովհաննես Չմշկիկը (969—976 թթ.) և Վասիլ II (976—1025 թթ.) մեծ հոանդով և դաժանությամբ կայսրության սահմանները Արևելքում բնդլայնում էին նաև Հայաստանի հաշվին, բնդ որում դրան ուղեկցում էր հայերին իրենց երկրից Բյուզանդիա արտագաղթեցնելու ավանդական քաղաքականության շարունակումը: Սրան պակաս չափով չէին նպաստում հաև հայ ֆեոդալների երկպառակությունները, Բաղրատունիների իշխանությունից նրանց կենտրոնախույս ձգտումը, իրենց դավառներում ինքնուրույն տնօրեն մնալու մարմանջը, որը ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացման արդյունքն էր՝ պայմանավորված նաև արտաքին քաղաքական իրադրություններին հարմարվելու միտումով:

Գաղթեցնելով հայերին կամ նպաստելով նրանց՝ ղեպի Բյուզանդիայի շրջանները կատարած արտագաղթին, կայսրությունը նպատակ ուներ ա) կենսազործելու հայերին դավանափոխանելու և հույների մեջ ձուլելու տրադիցիոն քաղաքականությունը, բ) բնակեցնելու բյուզանդական մի շարք շրջաններ, այդ թվում նաև եվրոպական մասում և նպաստելու դրանց տնտեսական զարգացմանը և գ) հայերի զինվորական ուժը օգտագործել կայսրության թշնամիների դեմ, այժմ արդեն (10-րդ դար) նրա արևմտյան սահմաններում, մանավանդ որ արարները Արևելքում խիստ թուլացած էին և որտեղ «Համադանիտները, Բուխտները, Սաֆարիդները և այլն միմյանց դեմ պատերազմում էին՝ միանգամայն թուլացած խալիֆների պետության մնացորդների վրա և որտեղից այլևս վտանգ չկար»¹⁷:

964—969 թվականների արշավանքի ժամանակ Նիկիփորոս II Տարոնը միացրեց կայսրությանը¹⁸ և ապա զուտ պաշտպանական նպատակներով մեծ թվով հայեր, հիմնականում պալլիկյան շարժման մասնակիցներ, տեղափոխեց Ֆիլիպոպոլիս¹⁹ (այժմ Պոլսի մոտ)՝ Հայաստանը ջլատելու և նրա բնակիչներին տեղահանելու զործում Վասիլ II ղերազանցեց իր նախորդներին: Ասողիկի վկայությամբ՝ իր 1021—1022 թվականների արշավանքի ժամանակ նա ոչ միայն ավերում է 12 դավառ, այլև զգալի թվով հայեր է տեղափոխում Մակեդոնիա²⁰: Վասպուրականի թագավոր Սենեքերիմը, ինչպես վկայում է Թովմա Արծրունու պատմության շարունակողը, սրան տվեց իր թագավորությունը (1021 թ.) և բնակչությամբ հանդերձ գաղթեց «յաշխարհն Յունաց»²¹: Հայ բնակչության արտագաղթը Բյուզանդիա, ըստ երևույթին, առավել պարբերական բնույթի է կրել Բաղրատունիների անկման նախօրյակին և դրանից հետո: Լեռնադահլիճի լաստիվերցու ասելով՝ 1041 թ. Հովհաննես Սմբատի և նրա կրորայր Աշոտի մահից հետո մի շարք հայ նախարարներ, հավանաբար բյու-

17 Տե՛ս Հ. Գեղցեր, Համառոտություն բյուզանդական կայսրների պատմության, Վաղարշապատ, 1901, էջ 234:

18 Տե՛ս «Ստեփանոսի Տարսնեցույ Ասողկան պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 183 (այսուհետև տե՛ս Ասողիկ):

19 Տե՛ս Գեղցեր, նույն տեղում, էջ 234:

20 Տե՛ս Ասողիկ, էջ 201:

21 Տե՛ս «Թովմա վարդպ. Արծրունույ պատմութիւն տանն Արծրունեաց», Թիֆլիս, 1917, էջ 501:

զանդական թեքում ունեցողներ «ելին... ի հայրենի ժառանգութենէ իրեանց, և եղեն պանդուխտ յօտար երկիր. յորում աւերեցան զաւառք և զնացին յաւար տանն Յունաց: Եղեն շինանիստ աւանք՝ բնակութիւն զազանաց, և անդաստանք նոցա յարօտ երէոց»²²,

Սակայն ո՞վ կարող էր կռահել պատմական իրադարձությունների ընթացքը: Բյուզանդական ռազմաքաղաքական բյուրոկրատիան ինքն էլ չգիտեր, որ թուլացնելով Հայաստանի ռազմունակ ուժը, դրանով նա վնաս է հասցնում նաև բուն կայսրությանը: Բազրատունիների թագավորության վերացումից հետո շուտով Անդրկովկաս, Հայաստան և Փոքր Ասիա ներխուժեցին սելջուկները, որոնց կանգնեցնել հայերը այլևս անկարող էին նաև այն պատճառով, որ կորցրել էին իրենց պետականությունը, իսկ նրանց մարտունակ ուժերը քշված էին կովելու բյուզանդական սահմանների պաշտպանության կամ ընդլայնման համար:

Սելջուկների արշավանքների հետևանքով առաջացած մղձավանջային վիճակը նոր խթան է հանդիսանում հայերի՝ դեպի Բյուզանդիա կատարած արտագաղթին: Ոմանց ենթադրությամբ, 1064 թ. Անիի անկումից հետո, Բյուզանդիա գաղթած հայերի թիվը 150 հազար հոգուց պակաս չի եղել:

* * *

7—11-րդ դարերում Հայաստանից արտագաղթած բնակչության մի հիմնական մասը հաստատվեց Բալկաններում, Պոլսում, Սև ծովի հյուսիսային շրջաններում, Կովկասում: Պատմական հավաստի տեղեկությունները այն հաստատ համոզմանն են բերում, որ 11—13-րդ դարերում (մինչև 1330 թ.) Ղրիմում գոյություն ունեցած հայկական գաղութը եղել է վերևում նշված գաղթականության մի հատվածը: Տվյալ դեպքում ուշադրության արժանին այն ուղիների որոշումն է, որոնցով հայերը գնացել են Ղրիմ:

Ղրիմի թերակղզին հայերին ծանոթ էր դեռևս հնագույն ժամանակներից: Տրամաբանորեն ճշմարտությանը չի հակասում այն կարծիքը, թե Միհրդատ Եվպատորի զորքերի մեջ, իբրև նրանց ղեկավարներ, Տավրիկիայում մարարն չել են նաև հայկական զորամասեր²³: Ստրաբոնը տեղեկացնում է, որ Տիգրան Մեծի և Միհրդատի աշխարհակալություններից հետո հայերը վաճառականությամբ են զբաղվել Սև ու Կասպից ծովերի ափերին և առևտուր են արել սարմատացիների և սիրակացիների հետ²⁴, որոնք ապրում էին Տանաիս գետի մոտ, Հյուսիսային Կովկասում և Ներքին Դանուբի շրջանում: Տանաիսի (Դոն գետի) մոտերքը առևտուր անող հայերը չէին կարող կապերի մեջ չմտնել Ղրիմի հետ, որովհետև Տանա քաղաքի (նույն գետի գետաբերանում) առևտրին շունչ և եռանդ տվողը նաև Ղրիմի ծովափնյա քաղաքներն էին:

Սկսած 8-րդ դարից հայերը կարևոր դեր են կատարել Բյուզանդիայի քաղաքական ու տնտեսական կյանքում: Հենց Բյուզանդիայի միջոցով էլ, որին մինչև 13-րդ դարը ենթակա էին Ղրիմի մի շարք կետեր, հայերը թափանցել

²² «Պատմութիւն Արիստակէայ վրդայ. Լաստիվերցոյ», Թիֆլիս, 1912, էջ 51:

²³ Տե՛ս Դ. Պատկանյան, Նոր Նախիջևանի հիմնարկությունը և տավրիկյան հայերը (տե՛ս ՀՍՍՌ Մատենադարանի արխիվ, անհատական անձ. ֆոնդ, թղթապանակ՝ 137, վավերաթուղթ՝ 68):

²⁴ Տե՛ս «Կոունկ հայոց աշխարհին», 1863, էջ 605:

ևն Տավրիկիա: 8-րդ դարի սկզբներին խերսոնես քաղաքում էր գտնվում հայազգի Վարդան անունով մի իշխանավոր, որը հետագայում գահընկեց արեց Հուստինիանոս II-ին և դարձավ Բյուզանդիայի կայսրը²⁵: Սովորաբար իրենց ձեռնարկություններում Բյուզանդիայի հայ իշխանավորները հենվում էին նաև համազգիների վրա: Կարելի է կռահել, որ Տավրիկիայում Հուստինիանոս II-ի դեմ ապստամբելիս Վարդանին նեցուկ են եղել նաև տեղացի հայերը:

10-րդ դարում խերսոնես քաղաքի հարուստ իշխանավորների շարքում մենք տեսնում ենք Կալոկիր անունով մի հայի, որի միջոցով Բյուզանդիան աշխատում է դիվանագիտական հարաբերությունների մեջ մտնել Կիևի իշխան Սվյատոսլավի հետ՝ նրան բուլղարների վրա շարժելու նպատակով²⁶: Քաղաքի երևելիների շարքում հայի հանդես գալը չի կարող չվկայել այնտեղ բնակություն հաստատած հայերի մասին:

10—11-րդ դարերում հայերը Ղրիմ են թափանցել Բյուզանդիայի քաղաքական և կրոնական ճնշումների, թուրք-սելջուկների՝ դեպի Փոքր Ասիայի խորքերը ավելի ու ավելի առաջանալու, առևտրական, բյուզանդական ղինվորական գումարտակներում ծառայելու և այլ պատճառներով ու շարժառիթներով:

Ինչպես ասացինք՝ 10—11-րդ դարերում կայսրության փոքրասիական շրջաններում և եվրոպական մասում կուտակվել էր զաղթական հայության մի ստվար զանգված: Բայց հույն պաշտոնյան և կղերը այստեղ ևս, կայսրության սահմանների մեջ, հանգիստ չէին թողնում հայերին: Չուլման քաղաքականությունը հայերի նկատմամբ շարունակվում էր նույնիսկ սելջուկների արշավանքների ժամանակ: Նրբամի հաջողություններով արբեցած՝ բյուզանդացի պաշտոնյան և հոգևորականը կարծես ոչինչ չէին ուզում սովորել սելջուկների արշավանքներով ստեղծված նոր կացությունից: Գաղթական հայությունը իր մի մասով, անշուշտ, կուլ գնաց այս քաղաքականությանը: Բայց միայն մի մասով: Նրա մի զգալի մասն էլ նշված և այլ հանգամանքների բերումով ցրվեց կայսրության ծայրամասային գավառները, իսկ այնտեղից էլ՝ նաև Ղրիմ:

Հայերին Ղրիմը ձգում էր նաև առևտրին հարմար իր դիրքով: 10-րդ դարի երկրորդ և 11-րդ դարի առաջին կեսերին արդեն նկատելի է հայերի համեմատաբար մեծ զանգվածային տեղաշարժ Բալկաններից և Կ. Պոլսից դեպի Սև ծովի հյուսիսային շրջանները և Ղրիմի քաղաքները²⁷: Այս նույն ժամանակ էլ նշանակալից քանակությամբ հայ զաղթականներ են կուտակվում Տրապիզոնում, որոնց նույնպես վիճակված էր կտրել Սև ծովը և ամփոփվել Ղրիմում: Հավանաբար Բուլղարիայից, Մերձդանուբյան շրջաններից և Կ. Պոլսից հայերը Ղրիմ են անցել Դանուբ—Պոլիս գծով և Սև ծովի հյուսիսային ափերով²⁸: Բացառված չէ այն, որ հայերը մտնելով Պոլիս—Ղրիմ և Տրապիզոն—Ղրիմ առևտրական կապերի մեջ, հետզհետե հաստատված լինեն Ղրիմի ծովափնյա առևտրական կետերում: Դրա վկան կարող են լինել այն գրավոր փաստերը, որոնք պատմում են 13-րդ դարում Կաֆայում և Կոստանդնուպոլսում ապրող հայերի առևտրական գործունեության մասին: Դրանք հիմնականում Կաֆայի (Թեոդո-

²⁵ Ю. Кулаковский, Прошлое Тавриды, Киев, 1914, էջ 67:

²⁶ Նույն տեղում, էջ 112:

²⁷ Տե՛ս «Արոր», 1911, № 9, էջ 79:

²⁸ Տե՛ս Ա. Ալպոյաճյանի նշված աշխատությունը, էջ 355:

սիա) և մասամբ էլ Պերայի հայ և իտալացի առևտրականներին վերաբերող նոտարական ակտերն են²⁹։

Բայց կան փաստեր դեռ 10-րդ դարի երկրորդ կեսերին Սև ծովի՝ Ղրիմին մերձակա հյուսիսային շրջաններում ապրող հայերի մասին։ Այսպես, Ակերման քաղաքի հայկական եկեղեցու պատերի մեջ զետեղված մարմարյա սալիկներից մեկը վերաբերում է 967 թվականին, իսկ մեկ ուրիշը՝ 1152 թվականին³⁰։

Ռումինացի պրոֆ. Անճելեսկուն գտնում է, որ 11-րդ դարում Ռումինիայի վրայով, այսինքն մերձդանուբյան տերիտորիաներով, հայերը անցել զնւցնել են Սև ծովի հյուսիսային շրջանները և մասնավորապես՝ Ղրիմ³¹։

10—11-րդ դարերում և հետագայում էլ հայերը Ղրիմ են դաղթել նաև ուղղակի Փոքր Ասիայից, Սև ծովով, հատկապես Տրապիզոն (Խալդես) — Ղրիմ և Սինոպ (Արմենիակ) — Ղրիմ ծովային ուղիներով, ուղիներ, որոնց հայերը ծանոթ էին դեռևս հին ժամանակներից և մասնավորապես 5—7-րդ դարերից, երբ, Կոստանդին Միրանաձնի տված տեղեկությունների համաձայն դրանցով Տավրիկյան խերսոնեսը Փոքր Ասիայից ստանում էր մթերքներ³²։

Վերևում արժարժեքներից բացի՝ հայերը Ղրիմ էին բնակում նաև այլ հանդամանքների բերումով։ Մասնավորապես ոչ քիչ թվով հայեր Ղրիմ և մերձագոգյան շրջաններ կարող էին անցնել այն դորքերից, որոնց Բյուզանդիան ուղարկում էր այնտեղ պատերազմելու։ Այսպես, նշանակալից քանակությամբ հայեր Թամանի վրայով Ղրիմ կարող էին անցնել բյուզանդական այն բանակից, որի կազմում մտած հայոց զորքը, Մ. Ուսհայեցու տեղեկության համաձայն, այդ բանակի հետ միասին 1065 թ. Դոն գետի մոտ զլխովին պարտություն են կրում ուղերից³³ (ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը նշում է, որ սրանք նույն օգուղները կամ կոմաններն են)³⁴։

* * *

Մենք տեսանք, որ 7—11-րդ դարերում իրենց երկիրը թողած հայերը տարբեր ուղիներով բնակում են նաև Ղրիմ։ Արդեն 11-րդ դարում Ղրիմի դանադան մասերում հայկական ամփոփ դադութի գոյության օգտին են խոսում ստորև լուսարանվող նյութերը, որոնք իրենց բովանդակությամբ դանադան են և վերաբերում են 11—13-րդ դարերին, ինչպես նաև 14-րդ դարի առաջին երեք տասնամյակների (մինչև 1330 թվականը) ղրիմահայ կյանքի բավական տարրերը կողմերին։

Առաջին խոսքը տանք Ղրիմի հայերեն արձանագրություններին։ Դրանցից առաջինը, որ պահպանվել է Թեոդոսիայի հայկական հնաշեն եկեղեցում և

²⁹ Actes des Notaires Cenois de Pera et de Caffa de la fin du treizieme siecle (1281—1290), Bucarest, 1927, էջ 90, 174, 225, 229, 228, 244 և այլն։

³⁰ Հայկական ՍՍՏՊ ՊԵՊԱ, ֆոնդ 40, թ. 3 և 4։ Հմտ. «Տարագ» տարեկիրք, 1933, էջ 162։

³¹ ՏԷՍ «Հայրենիք», 1930, № 3, էջ 101։

³² ՏԷՍ Ա. Ա. Таланс, Раннесредневековый Херсонес (диссертационная работа), М., 1956, էջ 168։

³³ ՏԷՍ Մատթեոս Ուսհայեցի, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 151։

³⁴ ՏԷՍ «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 1, էջ 71։

ապա տեղափոխվել քաղաքի թանգարանը զրվել է 1027 թվականին. «Թվ. ՆՂԶ. Բարեխառն սուրբ նշանքս Գրիգորին և իր զաւակին»³⁵։ Սա երեք խաչեր պատկերող մի վեմ է, և արձանագրությունն էլ գտնվում է մեջտեղում զետեղված խաչի վրա։ Իդուր է Պ. Բարկովը տասնամյակներ հետո փորձում կասկածի տակ առնել Մ. Այվազովսկու, Քուչակ Իոհաննիսյանի, Ք. Քուչներյանի և այլոց կողմից կատարված այս արձանագրության ընթերցումը և նույնի փոխարեն կարդալով Չ. արձանագրության ժամանակը ուղիղ 300 տարով և ուր երևել, այսինքն այն վերագրել 1327 թվականին³⁶։ Նույնիսկ այդպիսի թվարկությամբ էլ այն վկայում է մինչև 1330-ական թվականը Ղրիմում ապրող հայերի մասին։ Սակայն ինչո՞ւ կասկածելու Հայերեն արձանագրությունը ճիշտ ընթերցելու հարցում մենք հիմք ունենք գերապատվությունը տալ Մ. Այվազովսկուն, Ք. Քուչներյանին և Ք. Իոհաննիսյանին, քան թե Պ. Բարկովին, որն ի դեպ, արձանագրությունը տեսել և ընթերցել է Թեոդոսիայից իրեն ուղարկված լուսանկար-պատճենով³⁷։ Մ. Բժշկյանը, որն այս արձանագրությունը Բարկովից ավելի քան 100 տարի առաջ է տեսել Թեոդոսիայի «Հանդիսարան հնութեանց»-ի մեջ, նույնպես այն կարդում է ՆՂԶ³⁸։ Սակայն նա թույլ է տալիս չհիմնավորված մի ենթադրություն, ասելով՝ «Թուի թէ զայս վէմ բերեալ են աստ յԱնույ և ևղեալ յեկեղեցի ինչ»³⁹։ Բժշկյանը թերևս ի վիճակի էր այդպես կարծելու, որովհետև նրա ժամանակ դեռ հրապարակված չէին այն փաստերը, որոնք խոսում էին 11—13-րդ դարերին թերակղզու ծովափնյա քաղաքներում ապրած հայերի մասին։ Այդպիսի փաստերի բացակայությունն է ստիպել նրան հանգելու նման ենթադրության։

1895 թ. լինելով Ղրիմում՝ Մոսկվայի Հաղարյան ճեմարանի դասախոս Քրիստափոր Իոհաննիսյանը (Քուչակ) տեղի հայկական եկեղեցիներից հավաքել է շատ արձանագրություններ. նրա ուսումնասիրած արձանագրություններից մեկն էլ զրված է վերևում մեջբերվածից ընդամենը 20 տարի հետո՝ 1047 թ.։ Եւ մարմարյա մի սալիկ է, որը նման շատ սալիկների հետ զետեղված է Թեոդոսիայի սր. Սարգիս հայկական եկեղեցու պատի մեջ, եկեղեցի, որը Ք. Քուչներյանի հիմնավոր կուսմամբ պիտի կառուցված լինի 10—11-րդ դարերում⁴⁰։ «Բարեխառն սր խաչս Մկրտիչ մանուկին, որ ընկղմեցաւ ի մէջ ծովու թվականի ՆՂԶ սկսեալ ամին» (1047 թ.)⁴¹։ Շատ հավանական է, որ զԺրախտ պատահարը տեղի է ունեցել Հայաստանից Ղրիմ կատարված գաղթի ժամանակ։ Չի բացառվում նաև այն, որ զոհվողը վաղուց արդեն Կաֆայում հաստատված հայ բնիկների զավակ է, որի հիշատակը նրա ծնողները հավերժացրել են մարմարյա այդ տախտակով՝ այն զետեղելով զրիմահայ հնագույն եկեղեցիներից մեկի պատի մեջ, նման հուշատախտակների կողքին։ Բայց հրկու դեպքում էլ այն խոսում է 11-րդ դարի կեսերին Ղրիմում ապրող հայ բնիկների մասին։ Հուշատախտակներից մեկն էլ մատնացույց է անում

³⁵ З. О. О. И. Д., том VI, 1867, էջ 328։

³⁶ Известия Государств. Географич. общ-ва, 1939, том. 71, вып. 7 (статья П. Габкова)։

³⁷ Տե՛ս նույն տեղում։

³⁸ Տե՛ս Մ. Բժշկյան, նշված աշխատությունը, էջ 347։

³⁹ նույն տեղում։

⁴⁰ Ք. Վ. Քուչներյան, նշված աշխատությունը, էջ 124։

⁴¹ Հայկական ՍՍՏՌ ՊԿՊԱ, ֆ. 40, դ. 19, թ. 2 (Քուչակ Իոհաննիսյանի ֆոնդը)։

13-րդ դարում Կաֆայի հայ գաղութում եղած զասային բաժանման մասին. «Սբ նշանքս բարեխառն է պր Մերին, Փաշախաթունին, Պեյմեխին, Ազիզխաթունին. թվ. ՈԿ» (1211 թ.)⁴², Պարզ է, որ սլարոն և պեյ (բեյ) բառերը այստեղ այլ բան չեն, քան գաղութի հարուստ և անվանի ներկայացուցիչների հորջորջում:

Այսպիսով, Կաֆայի հայերը սովորություն են ունեցել տեղի անվանի մարդկանց կամ նահատակվածների հիշատակը հավերժացնել՝ քաղաքի հայկական եկեղեցիների պատերի մեջ մարմարյա տախտակ-հուշարձաններ դնելով. Թ. Իոհաննիսյանը հավաքել է այդպիսի 21 արձանագրություն: Դրանք բոլորը ինչպես մինչև 14-րդ դարը, այնպես էլ հետագայում բարեխոսում են մելիքների, բեյերի և խաթունների համար և եզակի բացառություն են կադմում միայն այն «հասարակ» մահկանացուները, որոնք դասվել են նահատակների շարքը: Այդպիսի բացառություններից են, օրինակ, մի ոմն Գորգին և նրա եղբայր Ստեփանը, որոնց համար հիշատակ է հանդիսանում 1243 թ. կրող տախտակը: «Յշտկ է սբ նշանքս նահատակի Գորգին և եղբորն Ստեփանին. թվ. ՈՂԲ»⁴³,

Հայերեն արձանագրությունները հավաստում են, որ հայկական բնակչություն է եղել ոչ միայն Կաֆայում, այլև թերակղզու այլ մասերում ևս: Այսպես, պատմա-լեզվական ուղադիր ուսումնասիրության ենթարկելով հերսոնեսի հաշաձե տաճարում 1902 թ. հայտնաբերած հայերեն երկու արձանագրությունները, Ն. Մառը գտնում է, որ զրանցից մեկը չի կարող 13-րդ դարից ուշ լինել⁴⁴, մյուսի ժամկետը անընթեռնելիության պատճառով նա դժվարացել է պարզել: Ուղագրավ է այն, որ զրանցից մեկը փորագրված է ծեփի վրա՝ որմնանկարի տակ, իսկ մյուսը՝ մարմարյա հիմքի բեկորների վրա:

Արձանագրությունների՝ պատի որմնանկարի և մարմարյա հիմքի վրա գտնվելը բնականաբար վկայում է դրանց Ղրիմում գրված լինելու մասին, միաժամանակ հերքում այն մարդկանց միտումները, որոնք փորձում են Ղրիմի հին հայկական արձանագրությունները ներկայացնել իբրև դարձված հուշարձաններ: Մեր խոսքը, իհարկե, բացառություններին չի վերաբերում:

Հին Ղրիմ (նախկին Սուրխաթ, էսկի Ղրիմ) քաղաքից 4 կմ հեռավորության վրա անտառում գտնվող հայկական Սուրբ Խաչ նշանավոր վանքի արձանագրություններից մեկը կարող է վկայել, որ այստեղ 14-րդ դարի սկզբներին հայեր էին ապրում: Այդ արձանագրությունը գրված է 1311 թ. և բարեխոսում է Խաչիկ պապաքի, նրա ծնողներ Շահիպի, Փաշախաթունի և նրանց զավակների համար⁴⁵:

Ղրիմի հայերեն արձանագրություններից զատ՝ 11—13-րդ դարերի տավրիկյան հայերի մասին ստույգ տեղեկություններ են հաղորդում հունական ձեռագիր վկայությունները: Միջնադարյան Ղրիմի ծովափնյա քաղաք Սուդակում (նաև Սուզգեա, Սուրոժ, Սուդայա) գրված հունական մագաղաթյա հայսմսվորքի (սինակսարի) լուսանցքներում կատարված նշումները մեզ բերում են

⁴² Նույն տեղում, թ. 4:

⁴³ Նույն տեղում, թ. 7:

⁴⁴ См. Н. Н. Марр, Заметки о двух армянских надписях, найденных в Херсонесе, էջ 1—2:

⁴⁵ См. З. О. О. И. Д., том VI, էջ 325:

այն հաստատ համոզմանը, որ թերակղզու այդ նշանավոր առևտրական կենտրոնում 11—13-րդ դարերին հույների հետ միասին ապրում էր հայկական ստվար բնակչությամբ մի գաղութ: Տակավին 1006 թ. զատիկը տոնելու առթիվ, այստեղ ևս հայերի և հույների միջև վեճ է ծագել: Այդ թվականին հույները զատիկը նշել են ապրիլի 6-ին, իսկ հայերը՝ 13-ին⁴⁶, Հունական հայսմավուրքի գրառումներից մենք իմանում ենք, որ Սուղակում հույների և հայերի միջև նման վեճեր են ծագել նաև 1102⁴⁷ և ապա՝ 1292 թվականներին⁴⁸, Հասկանալի է, որ այդպիսի վեճեր կարող էին ծագել և ձեռագրում հիշատակվելու տեղիք տալ միայն համայնքների և ոչ թե առանձին անձանց միջև: Հենց այն հանգամանքը, որ հույները կարևոր են համարել հայերի հետ վեճի առարկա դարձնել զատիկը տոնելու ժամկետը, այդ հանգամանքը խոսում է քաղաքում հայ բնակչության նշանակալից քանակի և գրաված դիրքի մասին: Հունական հայսմավուրքի ուշագիր բնթերցումը առավել պիրկ է դարձնում այս միտքը: Այնտեղ խոսվում է զատիկը սխալ տոնած ոչ թե առանձին մարդկանց, այլ հավաքական խմբի, հայերի մասին: «Այդ օրը 6800 (1292) թվին լուսնի շրջանը 17, արևի շրջանը (24), եղավ քրիստոնեական Զատիկ: Իսկ հայերը նույն ամսի 16(ին), որովհետև կորցրել էին (իմա՝ մոլորվել էին—Վ. Մ.), այսինքն 6(ին)»⁴⁹: Նույն համոզմանն են բերում հայսմավուրքի մյուս գրառումները, որոնք հիշատակում են Սուղակում ապրող հայերի՝ Սմբատի որդի Դավթի (1242 թ.), Սամատի որդի Նիկիմի (1283 թ.) և Սամատի կին Նրնիչուի (1306 թ.) մահը⁵⁰:

Այսպիսով, եթե հայերեն արձանագրությունները հիմնականում խոսում էին 11—13-րդ դարերին Կաֆայում եղած հայկական գաղութի մասին, ապա նույնն են հաստատում հունարեն գրավոր վկայությունները Սուղակի վերաբերյալ:

Սև ծովի ավազանի երկրների պատմության նշանավոր մասնագետ Ֆ. Բրունը, նկատի ունենալով 12-րդ դարը, գրում է, թե սլավոնների առաքյալի կենսագրության մեջ Սուղակի բնակիչների թվում առաջին հերթին նշված են հայերը⁵¹: Եթե 12-րդ դարում Սուղակի հայերը աննշան թիվ կազմեին, ապա սլավոնների առաքյալի կենսագիրը քաղաքի բնակիչներին ըստ ազգությունների թվելիս՝ հայերին առաջին հերթին չէր նշի և առհասարակ կարող էր շահատակել: Թերևս ումանք ենթադրեն, թե կենսագիրը նկատի է ունեցել այբբենական կարգը: Եթե այդպես լիներ, ապա հայերի (Армяне) փոխարեն նա առաջինը պիտի հիշատակեր ավալզգիներին (авайзги), մինչդեռ սրանք բռնում են Լրրորդ տեղը, պարսիկներից (իմա՝ թուրքերից) հետո⁵²: Սխալ չէր լինի պնդել, որ տվյալ դեպքում հեղինակը նկատի է ունեցել հայերի մեծաքանակ լինելը, համեմայն դեպք քաղաքում նրանց պատկառելի թիվ կազմելը: Նույն կերպ է վարվել նաև 13-րդ դարի սկզբների արաբ հեղինակ Իբն-ալ-Բի-

⁴⁶ Տե՛ս «Արոր», 1911, № 9, էջ 75:

⁴⁷ Տե՛ս X. A. Караманица, Армяне на Дону (անտիպ հոդված, «Գատմա-բանասիրական հանդեսի» արխիվ):

⁴⁸ З. О. О. И. Д., том V, 1803, էջ 609:

⁴⁹ Նույն տեղում:

⁵⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 598 և 603:

⁵¹ Տե՛ս Ф. Брун, Черноморье, часть II, 1880, Одесса, էջ 129:

⁵² Տե՛ս նույն տեղում:

բին, որը իբրև Սուղակի բնակիչներ՝ լուսաբանման համար Դրանք հայկական ձեռագրերն են՝ գրված Կաֆայում 14-րդ դարի սկզբին: Մեզ հասել է Ավետիք «խորաճակատ» վարդապետի պատվերով 1305 թ. Կաֆա քաղաքում գրված մի ձեռագիր, որը պահվում է Փարիզի ֆրանսիական ազգային մատենադարանում (ձեռագրի ընդօրինակությունը գտնվում է Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանում)⁵³:

Գոյություն ունի փաստերի մի այլ խումբ, որը պակաս կարևորություն չունի քննարկվող հարցի լուսաբանման համար: Դրանք հայկական ձեռագրերն են՝ գրված Կաֆայում 14-րդ դարի սկզբին: Մեզ հասել է Ավետիք «խորաճակատ» վարդապետի պատվերով 1305 թ. Կաֆա քաղաքում գրված մի ձեռագիր, որը պահվում է Փարիզի ֆրանսիական ազգային մատենադարանում (ձեռագրի ընդօրինակությունը գտնվում է Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանում)⁵⁴:

Այդ ձեռագրի՝ «Ճառերտիրի» հիշատակարանը պատմում է, որ արդեն 14-րդի սկզբներին, ավելի ճիշտ 1305 թ. Կաֆայում նույն Ավետիք վարդապետի ջանքերով կառուցվել է սբ. Երրորդություն եկեղեցին, իսկ քաղաքից ոչ շատ հեռու Գամճակ վանքում՝ սբ. Աստվածածին եկեղեցին⁵⁵: Պատվիրելով երկու «Տոնականներ», Ավետիք վարդապետը դրանցից «զմինն եղ ի Գամճակն եւ զմիւսն ի Կաֆային եկեղեցին» ի սուրբ երրորդութիւն»⁵⁶:

Եկեղեցու և վանքի (եկեղեցով հանդերձ) առկայությունը մի այնպիսի երևույթ է, որն անխզելիորեն կապված է կրոնական համայնքի գոյության հետ: Եվ եթե 1305 թ. հայերը Կաֆայում եկեղեցիներ ու վանքեր են կառուցել, ապա հասկանալի է, որ նրանք քաղաքում արդեն պիտի շոշափելի քանակի լինեին: Հենց այդ է հաստատում նաև բերված հիշատակարանը, երբ ասում է, թե այդ կառուցումները կատարելու անհրաժեշտությունից զրոգված՝ Ավետիք վարդապետը «յորդորեաց զբազումս ի բարեգործութիւն»⁵⁷: Անշուշտ մի մեծ համայնք պիտի լիներ քաղաքում, որպեսզի վարդապետը ի վիճակի լիներ նախ՝ շատերին («բազումս») հորդորել և ապա՝ հանգանակությամբ այնքան միջոցներ հավաքել, որպեսզի կառուցեն՝ այն էլ երկու եկեղեցի:

Սակայն հայկական եկեղեցիներ Կաֆայում կային դրանից շատ և շատ առաջ: Գրավոր տեղեկություններ են պահպանվել, որ Ղրիմի ծովափնյա շրջաններում ջենովացիների հաստատման ժամանակ (13-րդ դ. 60-ական թվականներ) Կաֆայում եղել են հայկական եկեղեցիներ, ընդ որում դրանցից մեկը այդ ժամանակ արդեն գտնվել է ֆանդված վիճակում⁵⁸: Ինքնին հասկանալի է, որ 13-րդ դարի կեսերին Կաֆայում հայկական քանդված եկեղեցու դոյությունը խոսում է դրանից շատ և շատ առաջ նրա, ուրեմն և հայկական զաղութի գոյության մասին:

Թեոդոսիայի հենց կենտրոնում այժմ էլ տակավին կանգուն է հայկական սբ. Սարգիս եկեղեցին: Ք. Վ. Քուշներյանը գտնում է, որ այդ եկեղեցին հիմն-

⁵³ Տե՛ս В. Е. Сыроечковский, Гости-сурожане, 1935, М.—Л., էջ 161

⁵⁴ F. Macler. Arménie et Crimée Noted histoire notice de monuscrits (տե՛ս „Orient et Byzance“, IV, 2 (1930), էջ 361: Տե՛ս նաև «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հատ. II, էջ 551—552:

⁵⁵ Տե՛ս նույն տեղում:

⁵⁶ F. Macler, նույն տեղում:

⁵⁷ նույն տեղում:

⁵⁸ М. К. Старокадомская, Очерки по социально-экономической истории Генуэзской Кафы конца XIII в первой половине XV вв. (диссерт. работа), 1950, М., էջ 261:

վել է ջենովացիների Ղրիմ գալուց առաջ, նույնիսկ 10-րդ դարում⁵⁹։ Ոչ մի հնարավորություն չունենալով եկեղեցու կառուցման ստույգ ժամկետը որոշելու, մենք այնուամենայնիվ բաժանում ենք Քուչներյանի կարծիքը նախքան ջենովացիների Ղրիմ գալը, գուցե և 11-րդ դարում այդ եկեղեցու հիմնադրման մասին։ Եվ ահա թե ինչու։ Հայտնի է, որ ջենովացիները իրենցից հետո Կաֆա եկած հայերին տեղ էին հատկացնում քաղաքի միջնաբերդից, ջենովական թաղամասից՝ Ֆոենկ հիսալից գուրս⁶⁰։

Եվ իրոք։ «Monumenta historiae Patriae» ժողովածուի 2-րդ հատորում գետնից վաճառված Ջենովայի հանրապետության՝ Խազարիայի կոմիտեի (Ղրիմի պրասկենյակ—Officii Gazariae) Կաֆային վերաբերող 1316 թ. կանոնադրության մեջ ասված է, որ «Կաֆայի կոնսուլը կարող է հայերին, հույներին և մյուս քրիստոնյաներին, որոնք ջենովացիներ չեն և չեն համարվում ջենովացիներ, վարձակալության տալ այն հողը, որը ընկած է Սադոնի պալատից մինչև ծովը և ապա սուրբ Մարիամ եկեղեցու ուղղությամբ մինչև Կաֆայի պարսպից դուրս գտնվող դարափոսը, ընդհուպ մինչև հին դարափոսը»⁶¹։ Պատահական չէ, որ կանոնադրությունը տարբերություն է դնում և ընդգծում ոչ-ջենովացիներին վարձակալության տրվելիք տարածությունների սահմանագծերը, քանի որ քաղաքի մեջնաբերդում ապրում էին իրենք՝ ջենովացիները կամ այդպիսին համարվողները։ Ուստի և նշված սահմանները, ինչպես այդ երևում է կանոնադրությունից, չեն ամփոփում միջնաբերդի՝ Ֆոենկ հիսարի ներսում ընկած տերիտորիան։ Գերմանացի գիտնական Վիլհելմ Հեյդը նույնպես այն կարծիքին է, որ հայերին և հույներին վարձակալությամբ տրված հողը գտնվել է քաղաքի պարիսպներից դուրս։ «1316 թվականին,—գրում է նա,—Կաֆայի հյուպատոսը կարգադրություն ստացավ (նկատի ունի վերևում նշված կանոնադրությունը—Վ. Մ.) վարձակալության տալ հայերին, հույներին և ոչ-ջենովացի այլ քրիստոնյաներին քաղաքի պաշտպանական պարիսպներից դուրս գտնվող տարածությունը»⁶²։

Այնինչ սբ. Սարգիս եկեղեցին գտնվում է քաղաքի կենտրոնում, Ֆոենկ հիսարի պարիսպների ամփոփած տարածության գրեթե մեջտեղում։ Այս փաստը չի հարուցում կասկած, որ եկեղեցին կառուցվել է մինչև ջենովացիների գալը, այլապես քիչ հավանական է, որ հայերին կաթոլիկացնելու կուրս բռնած իտալացիները անեին նման մի բացառություն և իրենց թաղամասի կենտրոնում նրանց թույլ տային եկեղեցի կառուցել։ Այդպիսի բացառություն նրանք չարին նաև 1330 թ. Ղրիմ գաղթած հայերի համար։

Կաֆայի 1316 թ. կանոնադրության հայերին վերաբերող հատվածներից մեկը ավելի պարզորոշ է դարձնում ջենովացիներից շատ առաջ քաղաքում այլակական եկեղեցիներ լինելու փաստը և արգելում է հյուպատոսին տնօրինելու դրանց մերձակա հողերին։ «Հյուպատոսը (Կաֆայի),—ասված է կանոնադրության մեջ,—չի կարող տնօրինել այն հողին, որի վրա հնուց ի վեր

⁵⁹ Բ. Վ. Քուչներյան, նշված աշխատութ., էջ 124։

⁶⁰ Տե՛ս Մ. Բժշկյան, նույն աշխատութ., էջ 331 և 333։

⁶¹ «Monumenta historiae Patriae» t. II, Impositio Officii Gasariae, 1838, էջ 480։ Լատիներեն տեքստերի թարգմանությունը մեր խնդրանքով կատարել է Հայկ. ՍՍՈ ԳԱ Պատմության ինստիտուտի գիտաշխատող Չալկյանը, որին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը։

⁶² W. Heyd, Geschichte des Levantehandels..., էջ 174։

տեղավորված են հույների, հայերի եկեղեցիները և այդ եկեղեցիների վանքերը»⁶³։ Հնուց ի վեր բառերը այստեղ կարող են և հարյուրամյակներ նշանակել։ Այժմ անհնարին է ասել, թե կանոնագրությանը նշված որ եկեղեցին է սբ. Սարգիսը, բայց ուշարժանը տվյալ դեպքում ոչ թե հատկապես այդ է, այլ այն, որ Զենովայի հանրապետության 1316 թ. պաշտոնական փաստաթղթում նշված է հնուց ի վեր Կաֆայում հայկական եկեղեցիների գոյության փաստը, ընդ որում ըստ այդ կանոնագրության հայկական այդպիսի եկեղեցիները երեքն էին⁶⁴։

14-րդ դարի սկզբներին Կաֆայում և նրա շրջակայքում հայ գաղութի բազմաքանակ լինելը հաստատվում է զորավոր մի շարք այլ փաստերով, որոնք գրանցված են իտալական վերոհիշյալ ժողովածուում։ Նույն՝ 1316 թ. կանոնադրությունը հատուկ բաժին է նվիրել հայ եպիսկոպոսին պատկանող ջրմուղին՝ «Հայերի եպիսկոպոսի ջրմուղի ջրի ուղղությունը շեղելու մասին»⁶⁵ վերտառությամբ։ Տեղին է այդ փաստաթուղթը բերել ամբողջությամբ։

«Օրենք է շարադրվում և հրապարակվում, ըստ որի որևէ քաղաքացի կամ քաղաքացու իրավունքից օգտվող կամ Կաֆայի բնակիչ չպետք է հանդգնի կամ ձեռնարկի որևէ ձևով կամ պատճառով, որևէ բացահայտ կամ թաքուն մտադրությամբ շեղել ջուրը՝ մասամբ կամ ամբողջությամբ, որը ջրմուղի միջոցով հայերի մեծարգո եպիսկոպոսը իր հոգու փրկության համար պատվիրել է անցկացնել Կաֆայում, արգելվում է նաև այդ ջրմուղից ջուր վերցնել տալ որևէ ձևով. այդ ջուրը պետք է օգտագործվի միայն Կաֆայում և այն տեղերում, որոնք ենթարկվում են Կաֆային, այլապես տույժ է նախատեսվում այդ օրենքը որևէ ձևով խախտող որևէ մարդու համար՝ 3000 լալիքատ ասպերի չափով, և բացի դրանից նախատեսվում է, որ ջրմուղի ուղղությունը խախտողը պետք է վերականգնի այն և վերադարձնի այն իր իրավական տիրոջը։ Գանձված տույժը պետք է դրվի Կաֆայի Հյուպատոսի տրամադրության տակ, որպեսզի տույժի գումարը նա պարտավոր լինի ծախսել օգտակար կառուցումների և գործերի համար միայն Կաֆայում»⁶⁶։

Սկզբից ևեթ ընդդեմնք, որ ջրմուղը պետք է մինչև 1316 թվականը գոյություն ունեցած լիներ, որպեսզի Զենովայի հանրապետությունը նման որոշում ընդուներ։ Մյուս կողմից, եթե քաղաքում հայերը մեծաքանակ չլինեին, ապա նախ՝ եպիսկոպոսը միջոցներ չէր ունենա ջրմուղ անցկացնելու և ապա՝ հենց իր՝ եպիսկոպոսի (ուրեմն և առաջնորդարանի) կարիքն էլ չէր լինի։

Եվ հերավի։ Սակավաթիվ հայերը չէին, որ պիտի իրենց վրա սևեռեին Հռոմի պապ Իոհան 22-րդի կաթոլիկացնող հայացքը։ Սա, Ղրիմ ուղարկած իր առաջին եպիսկոպոս Հերոնիմոսի միջոցով, կարողանում է 1318 թ. Կաֆայի հայերի մի մասին կաթոլիկ դավանանքի դարձնել, ավելի շուտ ճանաչել տալ իր հողևոր գերիշխանությունը, նրանց ուղղելով նաև հորդորող մի նամակ⁶⁷։

Ղրիմում, մանավանդ նրա արևելյան ծովափնյա շրջաններում (Թեոդոսիա, Սուդակ), 13-րդ դարում հայերն արդեն այնքան էին զորեղացել տնտեսա-

⁶³ «Monumenta historiae Patriae...», էջ 480։

⁶⁴ Տե՛ս նույն տեղում։

⁶⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 380։

⁶⁶ Նույն տեղում։

⁶⁷ Տե՛ս «Հանդես ամսօրյա», 1911, էջ 450։

պես, որ ոչ միայն իտալացիների հետ միասին սևծովյան ավազանի ամենաաչքի ընկնող վաճառականներն էին, այլև իտալացիների հետ առևտրական զանազան գործարքներ կնքելիս նրանք նույնիսկ հանգես էին գալիս վարկատուի գերում⁶⁸։ Դեռևս Բաթուի ժամանակ, 13-րդ դարի 40—50-ական թվականներին, Թեոդոսիայի և Սուդակի հայերը ազատագրում էին այն քրիստոնյա գերիներին, որոնց թաթար-մոնղոլները բռնում էին այդ քաղաքները վաճառքի⁶⁹։

Սակայն 11—13-րդ դարերում հայ ազգաբնակչությունը նշանակալից թիվ է կազմել ոչ միայն թերակղզու հարավ-արևելյան, այլև հարավ-արևմտյան շրջաններում, հատկապես հերսոնեսում։ Այդ, ինչպես տեսանք, երևում էր նաև նույն քաղաքի հաշված տաճարի հայերեն արձանագրությունից։ Թերակղզու այս մասում հայերը այնքան զգալի թիվ են կազմում, որ սկսում են ազդեցություն թողնել ճարտարապետության և արհեստների վրա։ Համեմատելով հերսոնեսի միջնադարյան բաղնիքի և Ամբերդի (10—11-րդ դարեր) բաղնիքի շենքերը, ինչպես նաև 10—12-րդ դարերի հայկական և հերսոնեսի կավագործության արտադրանքը, սափորները, կերամիկան, ծածկաղյուսները, հնագետ Ա. Յակոբսոնը նշում է դրանց կատարյալ նմանությունը⁷⁰։ Նա գրեթե տարբերություն չի դնում այդ բաղնիքների շենքերի և նրանցում օգտագործված որոշ իրերի միջև։ Նա նշում է, օրինակ, Ամբերդի պեղումների ժամանակ բաղնիքում հայտնաբերված եղի գլխի ձև ունեցող բնակով մի գործիքի և դեռևս 1903 թ. հերսոնեսի բաղնիքում գտնված միջև եղած բացարձակ նմանությունը⁷¹։

Ըստ երևույթին հերսոնեսի բաղնիքը Հայաստանից Ղրիմ գաղթած հայ վարպետների ձեռքի գործը պիտի համարել, մանավանդ որ արձանագրական և անտրոպոլոգիական նյութերը միաբերան խոսում են 13-րդ դարում և դրանից էլ առաջ հերսոնեսում և նրա շրջակայքում եղած հայկական բնակավայրերի մասին⁷²։ Անտրոպոլոգ Կ. Ֆ. Սոկոլովան հետազոտելով 1955 թ. պեղումների ժամանակ 13-րդ դարին վերաբերվող մի շարք նյութերի հետ միասին հայտնաբերված մարդկային 18 գանգերը, գտնում է, որ դրանք, բացառությամբ 2—3 գանգերի, արմենոիդներ են, ուստի և անում այն ճիշտ եզրակացությունը, թե 13-րդ դարում հերսոնեսում հայ մշտական բնակչություն է եղել⁷³։

Քննարկված նյութը բավարար հիմք է տալիս ասելու, որ սկսած 11-րդ դարից Ղրիմի թերակղզում, հատկապես նրա ծովափնյա շրջաններում հաստատվել էր ստվար բնակչությամբ հայկական մի գաղութ, որը ժամանակի օտար պատմիչներին առիթ է տվել Ղրիմը անվանել Մովսյին Հայաստան (Armenia moritima)⁷⁴։

⁶⁸ Տե՛ս «Actes des Notaires...», էջ 174, 223, 244։

⁶⁹ Տե՛ս Բ. Վ. Քուչնեբյան, Նշված աշխատությունը, էջ 93։

⁷⁰ А. Л. Якобсон, Средневековый Херсонес, էջ 81, 103, 117 և 119։

⁷¹ Տե՛ս նույն տեղում, էջ 81։

⁷² Տե՛ս նույն տեղում, էջ 36։

⁷³ Տե՛ս «Херсонский Сборник», вып. V, Симферополь, 1959, էջ 73—74, (Կ. Ֆ. Սոկոլովայի «Антропологический материал из раскопок Херсонеса 1955 года» վերնագրով հոդվածը)։

⁷⁴ Տե՛ս Լ. Բաբայան, Հայերը Մովսյանիում և Բաքովինայում, Թիֆլիս, 1911, էջ 13։

Ահա այսպես, հնուց ի վեր հաստատվել և հարատևում էր ղրիմահայ գաղութը, երբ, ըստ մեզ հասած հին ղրիմցիների գրավոր ավանդության, այն լրացնելու եկավ հայ գաղթականության մի նոր հոսանք։ Դա արդեն 14-րդ դարի 30-ական թվականներին էր և առնչվում էր դրանից գրեթե հարյուր տարի առաջ սկսված թաթար-մոնղոլական արշավանքների հետ։ Մենք այստեղ նպատակ չունենք զբաղվելու այդ հարցի քննությամբ։ Նշենք, սակայն, որ թաթար-մոնղոլական արշավանքների և տիրապետության հետևանքով Հայաստանում ծայր է առել մի նոր արտագաղթ, որը այս անգամ ավելի մեծ չափեր է ընդունել, քան սելջուկների շրջանում⁷⁵։ Այստեղ արդեն իր հաստատումը կարող է գտնել հին ղրիմցիների այն հիշատակարանը, ըստ որի Չարմաղանի կողմից Անին գրավելուց հետո հայերն անցել են մերձվոլգյան շրջաններ, իսկ 1330 թ., Կաֆայի ջենովական հյուպատոսի հետ կնքած նախնական համաձայնությամբ, գաղթել Ղրիմ⁷⁶։ Կրկնում ենք, մենք այստեղ, տեղի սահմանափակության պատճառով, չենք կարող կանգ առնել այդ հարցի լուսաբանության վրա։

Սակայն ամփոփելով հատվածը, ավելացնենք, որ այս նոր համալրումից հետո 14—15-րդ դարերում ղրիմահայ գաղութը ապրեց տնտեսական ու մշակութային իր նախընթացը չունեցող աշխույժ մի վերելք, որը գաղութահայ կյանքի ուշագրավ, բայց դեռևս չուսումնասիրված բնագավառներից է։

75 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», առաջին մաս, 1956, էջ 296։

76 Տե՛ս Հայկական ՍՍՌ Մատենադարան, ձեռագիր № 7442, ք. 280—283։